



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱՔՆՆԻՉ ԔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

0026, ք. Երևան, Գ. Նժդեհի 23, հեռ. 44-88-94, էլ. փոստ.criminalcourt@armenico.com

ԳՈՐԾ հ. ԿԴ/0078/01/10

04 փետրվարի 2011թ.

ՏՈՒԺՈՂԻ ԻՐԱՎԱՀԱՁՈՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉ  
ԱՐՏԱԿ ՁԵՅՆԱԼՅԱՆԻՆ

Ձեր պահանջի համաձայն Ձեզ է տրամադրվում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից 03.02.2011թ. գործով մեղադրողներ Կ.Փիլոյանին և Հ.Հարությունյանին հայտնաձև բացարկի միջնորդությունը քննության առնելու մասին որոշումը:

Կից՝ որոշումը 1 օրինակից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03.02.2011թ.

ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ  
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
Ե.ԴԱՐԲԻՆՅԱՆ  
Ս.ՉԻՉՈՅԱՆ

Խորհրդակցական սենյակում քննության առնելով տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա.Ջնյալյանի կողմից դատական նիստին մասնակցող մեղադրողներ՝ Կ.Փիլոյանի և Հ.Հարությունյանի դեմ բացարկ հայտնելու մասին միջնորդությունը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Սույն քրեական գործով մեղադրողներին բացարկ հայտնելու իրավունքը բացատրելիս տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ՝ Ա.Ջնյալյանը, բացարկ հայտնեց նիստին մասնակցող մեղադրողներ Կ.Փիլոյանի և Հ.Հարությունյանի դեմ՝ պատճառաբանելով, որ քրեական գործի քննության վրա վերահսկողություն իրականացնելով դատախազներ Կ.Փիլոյանը և Հ.Հարությունյանը «քննել են միայն իր վստահորդի ինքնասպանության հասցնելու վարկածը և միայն ամբաստանյալ Ա.Հարությունյանի կողմից դրան հասցնելու վարկածը:

Մեղադրող դատախազները այլ վարկած քննելու հանձնարարական չեն տվել նախաքննության մարմնին»:

Բացի այդ, առաջին ատյանի դատարանում ՀՀ քր. դատ. օր.-ի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասով մեղադրանքը փոփոխելու իմաստով իրենց միջնորդությունը մերժելով կասկած է առաջացնում նրանց անկախության և անաշառության վերաբերյալ:

Վերաքննիչ քրեական դատարանը, քննության առնելով բերված միջնորդությունը, հանգում է այն հետևության, որ բերված միջնորդությունը ենթակա է մերժման՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ՝ նկատի ունենալով, որ համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 91-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի դատախազի մասնակցությունը քրեական գործի քննությանը, ինչպես նաև դատական նիստում նրա կողմից մեղադրանքը պաշտպանելը համապատասխան քրեական գործով վարույթին որպես դատախազ նրա հետագա մասնակցությունը բացառող հանգամանք չէ: Ինչ վերաբերվում է ՀՀ քր. դատ. օր.-ի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասով նիստերին մեղադրողի լիազորությունների իրացման խնդրին, ապա այն մեղադրողի համար իմպերատիվ պահանջ չէ:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ, 313-րդ հոդվածներով, վերաքննիչ քրեական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ՝ Ա.Ջնյալյանի, մեղադրողներ Կ.Փիլոյանին և Հ.Հարությունյանին բացարկ հայտնելու մասին միջնորդությունը, մերժել:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ  
Իսկախի մեծ փոխ է.

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝



Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ